Դաս 36. «Սասունցի Դավիթ» էպոսի կերպարները: Սանասար և Բաղդասար, Մեծ Միհեր

Սասնա Դավիթ

(հատված)

Սասուն երբ շինեցին պրծան, Սասանսար դիմեց աղբորը.

– Բաղդասա՛ր, արի գնանք ծով, մի լավ ձի ճարենք մեզ համար:

– Ծովածին էին, գիտեին, որ հրեղեն ձի կա:

Ելան, գնացին ծովափ: Սանասարը ասաց.

– Արի՛ քայլենք ծովի վրա, տեսնենք մարդ կարա՞ խրվի ծովի մեջ:

Բաղդասարը թե՝

– Չէ՛, ախպե՛ր, հոգին քաղցր է. ես ինձ չեմ թալե ծով:

– Լա՛վ, դու սպասի՛ր էստեղ, ես կերթամ:

Աստծու հրամանով ծովը ճեղքվեց:

Սանասարի աչքին չոր գետին էր, Բաղդասարի աչքին՝ ջուր...

Սանասարը ծովի միջով, ոնց որ ցամաքի վրա, գնաց, գնաց, հասավ խորքը: Էնտեղ մի պարտեզ կար, մեջը՝ ավազան: Մի պալատ կար, առջևը շատրվան էր խփում: Էնտեղ կապած է ծովածին, սադափի թամքը վրան: Թուր Կեծակին թամքեն կախած: Պարտեզի մեջ կար մի ժամ: Սանասարը մտավ ներս, քունը տարավ, ընկավ գետին: Մայր Աստվածածինը էնոր երազ եկավ, ձեն տվեց.

«Այ Սանասար, վե՛ր կաց: Խաչ-պատերազմին էստեղ է, յոթ ծունր աղոթք արա իր առջև, արժանացար, կիջնի քո

աջ թևին, քո վրա էլ ոչ մի զարկ չի բանի: Էստեղ է ծովաձին, անունը՝ Քուռկիկ Ձալալի, թմքած է, սանձը բերնի մեջ, արժանացար՝ կհեծնես»...

Սանասարը դուրս եկավ ժամեն, մտավ ավազան, լողացավ, էն աղբրի ջուրը խմեց ու նորեն քուն մտավ: Քնի մեջ Աստծու հրամանքով, զորեղացավ, դարձավ հրեղեն... Խաչ պատերազմին էլ իջավ էնոր աջ թևին վրա: Սանասարը մոտեցավ Քուռկիկ Ձալալիին, առավ Թուր Կեծակին ու պիտի հեծներ: Քուռկիկ Ձալալին լեզու առավ, խոսեց.

– Միտդ ի՞նչ է, Սանասա՛ր:

– Քեզ պիտի հեծնեմ:

– Քեզ կտամ արևին, կվառվես:

– Ձրեղեն եմ, կխաղամ քո փորի տակ:

– Քեզ գետնովը կտամ, կերթաս անդունդ:

– Հրեղեն եմ, կխաղամ քո մեջքին:

Սանասար հեծավ: Ձին վեր սուրաց, որ հեծվորին արևին տար, վառեր. հեծվորը խաղաց էնոր փորի տակ: Ձին վար սուրաց, որ հեծվորին գետնովը տար, տաներ անդունդ, հեծվորը բարձրացավ ձիու թամքը... Էն ատեն խելոքացավ, հնազանդվեց, ասաց.

– Դու իմ տեր, ես՝ քո ձին:

Նաիրի Զարյան